


ՀԱՅՅՐԵՆԻՔ

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Լ

Լ Ր Ա Գ



Գաւառաց քղրատարի ծախքը բաժանորդաց չ'վերաբերիր: Լրագրոյս վերաբերեալ որ եւ ի գրութիւն ուղղելի առ Տեօթեան տնային Ս. Յ. Միլիբեան ի Կ. Պոլիս Չիւմպուլիս խան վերնախարկ թիւ 10:

Ամեն երեքշաբթի օրերը կը հրատարակուի: Պոլսոյ համար 50 բուռց գինն է 2 արծաթ Մեծիս կանխիկ: քղրատարութեան ծախքը բաժանորդաց վրայ: Իսկ գաւառաց համար 2 1/2 արծաթ Մեծիս: Մանուցման տողը 2 գրդ:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահաւասիկ 1875 թուականը բոլորելով կանցնի և 1876 թուականը կը յաջորդէ:

Նոր տարւոյ առթիւ բնական է որ ամէն մարդ իր անցեալին վրայ համառօտ ակնարկ մը ձգէ, քննելու համար թէ ի՞նչ գլխաւոր դէպքեր տեղի ունեցած են և թէ ի՞նչ օգուտ ու բարիք մատակարարած է իրեն՝ անցեալը:

Այս տեսութեամբ մեք ևս իբր հրապարակային թերթ արժան է որ փոքրիկ ակնարկ մը ձգենք անցեալին վրայ, քննելու համար թէ սպառ ի՞նչ շահեցաւ և թէ անցեալը ի՞նչ կտակ թողուց մեզ:

1875 թուականը կարծուածին չափ արդիւնաւոր չեղաւ: Ազգին համար և հասարակութեան ունեցած յոյսն ու ակնկալութիւնը կատարութեան չը կրցան պատկուիլ: Մէկ կողմէն ժամանակի և պարագայից անպատեհութիւնը, միւս կողմէն բազմադան կարծիքներ վերիվայր դրողեցին գաւառի մը, այն է լուսաւորեալ իդմիրի ամբողջ հասարակութիւնը և այն պատուական ժողովուրդը երկպառակակ վիճակի մը մտնեցին: 1875 թուականին մէջ առաջնորդ մը հաւաքուեցաւ, նախատուեցաւ և տարապարհակ վարեցաւ ընդ ծով և ընդ ցամաք և այս խնդիրը իբր բուկղբան խնդիր տակաւին անլոյծ մընաց:

Այս թուականը մեզի բերաւ Պատրիարքական և վարչական անընդմիջական հրաժարականներ, վարչական երկու ժողովոց մէջ անհամաձայնութիւն, որոնք ազգային խնդրոց վընասելէ զատ ուրիշ արդիւնք մը չուներին:

Բայց միւս կողմանէ մըլխիթարութիւններ ունիւք. այն է վեհ. Սուլթանին իր հպատակաց շնորհած արտօնութիւնները, գաւառական հարստահարութեանց բարձման համար եղած ջանքերը, Ազգային ժողովոյ շարունակաբար դուստրու մը, և սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն քիչ ժամանակի մէջ յառաջ երթալը. ասոնց վրայ աւելցո՛ւր Մեծ. Գարակէօղեան եղբարց կտակը և Բերայի Ազգային գերեզմանատան մէջ կառուցուելիք վարժարանին թագրելը:

Գաւառներէն ոմանք, ինչպէս են կարին, Նիկիովիլա, Պրուսա, Անդրիանուպոլիս, Ատաբազար, Տիգրա-

նակերտ և ըն. լռիկ մնչիկ կը գործեն. իրենց գործերը իրենք կը տնօրինեն. առանց կեդրոնին վրայ ծանրանալու. միւս կողմանէ երզնկա առաջնորդական խնդրով մը պառակտեալ է. վան քսանամեայ խռովութեամբը կըբազի. Մուշ նորանոր ցաւերու կը մատնուի տեղւոյն առաջնորդական Տեղապահին երեսէն. Սըղերթ հարստահարութեանց մէջէն հառաչանքներ կարձկէ. Ատոնա, Անթապ, Հալէպ համաճարակ հիւանդութեան մը նշխարներու դէմ կը կռուին և Նիլիկիոյ ամբողջ թէմը իր կաթողիկոսին երեսէն կուի և խռովութեան մասնուած անտէր և անօգնական մնացած է:

Ազգային վանօրէից մէջ լըմիածին, երուսաղէս մ և Արմաշ անդադար կը գործեն ու պարբերականներով ժողովրդեան սիրտը կը հրահանգեն: Իսկ միւս վանքերը տակաւին չեն խըլտիր, կենդանութեան շարժումը չուցընեն, և համարատուութեան պարտքերին չեն կատարեր:

Ազգային վարժարաններէն շատ քիչեր բարւոք վիճակ մ'ունին և ազգին մանկտուայն ուղղի և հաստատուն դաստիարակութիւն կը մատակարարեն: Մասնաւոր վարժարանաց մէջ առաջին տեղ բռնած է Մէլգուլեան վարժարանը իւր բազմարդիւն հիմնադրին անխնջ աշխատութեան շնորհիւ:

Ահա՛ այս է մէկ խօսքով Ազգին ներկայ վիճակը որ իր դառնութեանց հետ բերկրութիւններ ալ ունի: Մարդեմք ուրեմն որ այս դառնութիւնք ամբին և նոր տարին լուսաւոր և փառաւոր ապագայի մը հիմնարկութիւն ընէ:

Իսկ մենք մեր արդոյ ընթերցողները սղոններով և նոր տարի շնորհաւորելով կը մանենք մեր եօթներորդ չըջանին մէջ. ո՛չ տարի մ'ալ մեր ընթերցողները գոհացուցած ըլլալու սին փագասիրութեամբ և ո՛չ ալ յառաջիկային համար մեծամեծ խստութիւններ ընելով. մենք դո՛հ և ուրախ եմք և մեզի հետ ընթերցողք դո՛հ ըլլալու են տեսնելով որ թէ և տկար, բայց միշտ քայլու արիւթութիւնն ունեցանք ցարդ հակառակ բազմադիմի դժուարութեանց և դըրամական անձկութեանց ըստ առաջին թէ՛ աւելի լաւ է ծանր բայց միշտ քայլել, քան թէ չուտ և կէս ծամբան մնալ:

Այս առթիւ կը խնդրեմք մեր բոլոր գործակալներէն և բաժանորդներէն որ անցեալ տարուան պարտ-

քերնին ժամ առաջ խրկել բարեհաճին, եթէ կը սիրեն մեր քաղցր ու անոր յարատև շարունակութեան ի սրտէ փափաքող են:

ԱԶԳԱՅԻՆ

Նախկին Պատրիարքական տեղապահ Գեր. Տ. Արիստակէս Սրբաղան որ երկարատեմէ ի վեր անողոք հիւանդութեամբ մը կը տառապէր, անցեալ շաբթու իր մահկանացուն կնքելով, ուրբաթ օր օծման և յուղարկուողութեան տխուր հանդէսը կատարեցաւ Իւսիկուտար Ս. Խաչ եկեղեցին ի ներկայութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր և բարձրաստիճան եկեղեցականաց, ուր Ամեն. Խրիմեան Սրբաղան Ս. Պատարագ մատուցանելով, սրտառուչ դաճախական մը խօսեցաւ: Հանդուցելոյն մարմինը փառաւոր հանդիսիւ Իւսիկ Ս. Կարապետ եկեղեցին ևս տարուելով, տեղւոյն քարոզիչ Գեր. Մատթէոս վարդապետ Իղմիրեան համառօտ բայց ընտիր դամբանականաւ մը հանգուցելոյն կենսագրութիւնն ըրաւ, որմէ վերջը միևնոյն չըբղութեամբ մարմինը դարձեալ Ս. Խաչեկեղեցին տարուելով վարժարանին պարտիզին մէջ արգէն պատրաստեալ Հոգեւոյն Յակոբ սրբազանի դերեղմանին մէջ ամփոփեցաւ:

Հանգուցեալը, ինչպէս գիտէ բովանդակ Ազգը, եկեղեցական և ազգային ծառայութեամբը նշանաւոր արի և վեհանձն եպիսկոպոս մ'էր, ընդ երկար առաջնորդական պաշտօն վարած և 1869 ին Պատրիարքական տեղապահ տաժանելի պաշտօնն կատարած էր ամենայն արժանաւորութեամբ: Հանգուցելոյն ազգային ծառայութեանց շարքին մէջ մեծ տեղ բռնած է ազգին մէկ դարաւոր Իրաւանց անվեհեր պաշտպան կանգնիլը: Իր կենաց վերջին օրերը շատ դառն և ցաւալի եղան և աւելի ցաւալի ու թշուառ պիտի ըլլային, եթէ Ազգը իր արժանաւոր պաշտօնէին մխիթարութիւն մը եղած ըլլալու համար ամական մը չը սահմանէր:

— Կը լսեմք թէ Մանզումէի խըմբազիր փանոսեան կարապետ էֆէնտին կը պատրաստուի յառաջիկայ դարձան դէպի Մոսկուա ճամբորդութիւն մ'ընել, ուր անցեալները իր ազգայեանին օրիորդներէն մէկը խրկեց տան մը մէջ վարժուցիութիւն ընելու համար: փանոսեան էֆէնտի

Մոսկուայէն ֆէթրապուրկ, Թիֆլիզ և Ռուսաստանի ուրիշ դիւսաւոր քաղաքներն ալ պիտի պտրտի: Նոյնպէս կըսեմք թէ իր ունեցած պարտքը վճարելու խորհրդով Ռուսաստանի մէջ հանգանակութիւն մը բանալու համար յատուկ յանձնարարական ալ պիտի ընդունի:

Չեմք կարծեր որ փանոսեան էֆէնտի իր Ազգէն օգնութիւն ըսպատելու յոյս մ'ունենայ. ըստ որում նա իր ազգը չինկեանէէն ալ վատթար համարեց, իր Ազգը, իր եկեղեցին, իր կրօնը և վերջապէս իր Ազգին Լուսաւորիչ Ս. Հայրն անգամ ուրացաւ. միայն ազգային լեզուն մնացած էր, զոր իր նողկալի և պժգալի յարձակմանցը ենթակայ ըրած չէր, թերևս հայ ազգութեան այդ մէկ հատիկ նշանին միայն խնայելով: Բայց այն ալ վերջին օրերս հայածել սկըսաւ, դժբաղդուար իր հայրաբառ Մանզումէին մէջ, որ նոր սկըսաւ հրատարակուիլ Ռուսաստանցի հայու մը ձեռքը և որ մասնաւորաբար կը խրկուի ի Ռուսաստան. կերևի որ փանոսեան էֆէնտի իր այս վերջին ծառայութեան վարձքն ընդունել կը յուսայ:

— Բ. Գուռը կազմեալ հարբտա հարութեանց և հողային խառն Յանձնաժողովը այս օրերս սկսած է տաճիկ պաշտօնատարներէ և մայրաքաղաքս գտնուած հմուտ վարդապետներէն տեղեկութիւններ քաղել և ըստ այնմ պատրաստել իր ծրարագիրը:

Այս առթիւ վանեցի արժ. Պօղոս վարդապետ անցեալ շաբթու Յանձնաժողովէն հրաւիրուելով, գաւառական հարստահարութեանց մասին կարևոր տեղեկութիւններ հաշորդեց որոնք Յանձնաժողովոյ անդամաց գոհունակութիւն պատճառեցին:

Կը լսեմք թէ խրիմեան սրբազան ալ պիտի հրաւիրուի իբր գաւառացի վարդապետ այս մասին ունեցած տեղեկութիւնները Յանձնաժողովին ներկայացնելու:

Մանզումէի 3003 թուոյն մէջ Ազգային կրօնի և եկեղեցականութեան դէմ նողկալի յօդուած մը հրատարակուած ըլլալով, որոյ համբակ և անուս մտքի մը ծնունդ ըլլալը յայտնի կը տեսնուի, Հայիական կրօնի ողբոյն նախանձայնոյ անձ մը հետեւեալ ընտիր յօդուածը խրկած է մեզ ի հրատարակութիւն:

ՆՈՐ ԿԲՕՆԻՔ

« Գուռը և ձեր կրօնի հոգիին կը... Գուռը և ձեր կրօնի հոգիին կը... »

Մանրուժէ ի թիւ 3003

Վեղարդը ի գետին նկատէ՛, Պատրիարք Կ. Պօլոյ Սրբազանք Ներսէս, վասն զի Գուռնայի մոլորութեան և մոլորութեան սիրահար Հայ կապիկը...

Բանաւորութեան կրօնը, որ Ֆրանսիայի լոյսը խաւարել, որ Ֆրանսիայի արիւննով և արցունքով ի դադաղ...

Պատանայի ԳՅԸ կը յիշուի, զոր սրիկայ շահատակը յառաջադիմութեան պատրուակին տակ պղծեցին...

մութը մերթ գգուեցին և մերթ գգուեցին, խառնակութեան և խառնակութեան մէջ լիառք մտաբանին...

Քրիստոնէ կրօնը, որ մարդը ազնուացոյց, մարդուն սահմանը անսալաւորէն գծեց, որ աշխարհներ, բովանդակ մարդկութիւնը լուսաւորեց...

Ոչ երբեք մարդկութեան կարելի է բարձրանալ առանց Աստուծոյ բանին, բանաւորութեան կրօնն որ մեր մտաց բանն է, չունի հաստատունութիւն...

Երանելի Մարտիրոսը և Հայրապետը, որք Աստուծոյ բանին բարձրութեան զոհ գնացին, ոչ թէ Փարիզու անկարողներուն կամ քոմիւնիստներուն նման արիւնուշտ...

Յեն նոցա երանելի յիշատակաց և պատուական օծեալ և սուրբ անուանց դէմ. հոգ չէ, զի իմաստակութեան շնորհքն է զբարաներն ու հայհոյել:

Բայց դու ո՛ր Պատրիարքը Ներսէս, վեղարդը ի գետին նկատէ, և կամ աչուրներդ բաց և չուրջդ նայէ, թէ ո՞ր չըջապատած են զքեզ, որպէս զի չորթ են միտքը և սիրտը... Եկեղեցույ և Ազգին առջև պատասխանատու պիտի մնաս...

Չայս դրելով... խմբագիր, կուղեմ յայտնել թէ Մանրուժէ իր դրածներովը, որ Զինիլի խանի խմբակին արձագանքն է, ոչ թէ միայն ազգային պարկեշտ սովորութեանց...

Բայց զի՞ կայ մեր ընդ նոսա մեր Աստուածեան, նոքա Սաղայէլեան, մեր Հոգւոյն, նոքա ռսկոյն, մեր բարոյն, նոքա շարին, մեր լուսոյ, նոքա միտքն, մեր ազգին, նոքա օտարին...

1875 Դեկտ. 21 ՓՍՅԱՅ

ՉԱՐՄԱՆՔ

(Ծագ. Գե. Բե. 278) Բայց որովհետեւ այս նպատակին առանց Մայր Աթոռոյ հաւանութեան յարկով կարելի չէր, ուստի գայթակղութեան քար մը գտնել ու գրել խորհեցան և դոտանալ, - ՍՍՈՑ

Խնդիր և սկսան դործել. ուստի մէկ կողմէն դուք դործեցին Մայր Աթոռը հարուածել և միւս կողմէն Եկեղեցին: Հարուածեցին Մայր Աթոռը յարձակելով նորա գահակալին անձնական պատուոյն դէմ և ըստ Ռուսական ազգեցութեան Աթոռոյն այժմուան յարմարութիւնը քարոզելով, հարուածեցին Եկեղեցին նորա դատարանական կամ ծխական վարդապետութիւնները խճճելով:

Չինիլի խանի Ֆառմաստ խմբակը իր ամեն ուժով իր դերը խաղցած ատեն, անդիէն Սիօնն ալ կը ձայնակցէր ի յաւիտեանական ամօթ և ի նախատինս իւր, ահա նորա ծագրալի մէկ առարկութիւնը. « Ինչպէս քահանայից և եպիսկոպոսաց բազմութեամբ են թագրուած չէ երբեք տարերք քահանայութիւն և եպիսկոպոսութիւն սոյնպէս և ոչ կաթողիկոսաց եկեղեցի կամ կրեքնութեամբ տարերք կաթողիկոսութիւն » 1871 դեկտ. 15-ին « միանգամ Հայոց ազգ, ու շիւմ և հեռատես խելօք մտածէ », թէ առարկութիւնն ազգը ո՛ւր կը տանի, կամ թէ Եկեղեցույ կարգն ու կանոնն որպիսի խանգարման և խառնակութեան կը տանի: Ո՛վ պիտի դոցա դէմ խօսէր կամ գործէր, անշուշտ Հայ լրագրութիւնն որ հըրապարակին վրայ այսպիսի պաշտօն մ'ալ ունէր: Եկեղեցույ և ազգին հաւատարիմ այս լրագրութիւնը, որուն այսպիսի տաղնապիմը մէջ զնասով անգամ տուժուիլ յուսալի էր, կամ թէ կը տուժուէր ալ, օրինակ ֆուէնը որ Ե. Անտոնեանի յոգուածի երեսնէն կը դադրէր... մութէ անարժան պիտի համարուէր կաթողիկոսական կամ եկեղեցական տէք քաջալերութեան մը, և զայս գործողն ու իցէ ոք ըլլար, թէ կաթողիկոս և թէ վարդապետ կամ ուրիշ անպաշտօն ոք, ազգին առջև յանցաւոր ու մեղաւոր պիտի նկատուէր, մեղայ Աստուծոյ, այլ ընդհակառակն ակտիւ պատուաւոր և բարերար, ուստի վեհ. Հայրապետին այս դործն ոչ թէ չարամիտ այլ բարեմիտ զարմանաց արժան է:

Մեր նախնիք զմեր Եկեղեցին այնպիսի գրութեան մէջ հաստատած ու պահած են, որ պատկանութեան, ոչ յունականութեան և ոչ բողոքականութեան մօտ է և իր մէջ ոչ իսկ մէկ ազգամիտ կամ հոգեմիտ տարբ ունի, նա առանձին մէկ խումբ է ամբողջ Բրիտանիոսութեան մէջ ազատ և ինքնուրոյն, իր անկախ սահմանագրութեամբն, որ յաւիտեանական է, որմէն մազիւ չափ չեղելու չէ, որուն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ

(Ծագ. Գե. Բե. 278)

Բալնը թէ՛ պոլսեցուց նիւթական վիճակը օր աւուր վատթարանալու վրայ է. և այս ոչ միայն Հայոց, հատկապէս Հրէից, Ճաճկաց, Յունաց և այլ ամեն բնակչաց:

Բայց ասոնցմէ ամենէն աւելի Հայուն վիճակը ակներև է. քանզի տաճիկը իւր ուժիկով, Հրէային իւր աչալընութեամբ և սրամտութեամբ, Յոյնը իւր ճարտիկութեամբ և սու-

տեր յօրինելով իւրեանց կեանքը կանցունեն, ապրուստին կը ճարեն, իսկ Հայը հաւատարիմ ծառայութիւն մ'ունի, որ մինչև գերութեան կը յանդի. դայթ ի դայթ արհեստ մը որ մերթ կ'անցնի մերթ Հանցներ, բեռնակրութիւն մը որ գրաստի կեանքէն տարբերութիւն չունի, առանց սակայն իւր ուտելիքը մը տաճող մ'ունենալու. վաճառականութիւն մը որ սահմանափակ է և հաղիւ իւր ունեցած պարագայները խնամելու ձեռնհաս:

Բայց անդին ստուար մաս մը աւուր պարէնի կարօտ խել մ'ալ նոր հասած երիտասարդներ անդործ և

անդադր թշուառ կեանք մը կը վարեն:

Ասկից քսան երեսուն տարի առաջ Պօլսոյ վիճակը ինչ որ էր, այսօր հարիւրին վաթսուն եօթանասուն փոխուած է. պատճառը մէկ կողմէն սղութիւնը՝ առանց սակայն ծառայութեան արժանիքը բարձրանալու, միւս կողմէն տնտեսութեան դեղձումը, որ զլիարուքաց մեր մէջ կը տեսնուի, մէկ կողմէն գործերու և առևտրի պակասութիւնը և միւս կողմէն զլիարուքար բընակչաց և դալթականութեան բազմանալը, արդէն տիրած ներդրեան վրայ դամբի և ս ծանրացած է:

Բնական ճշմարտութիւն մ'է թէ մէկ հոգիին ուտելիքը երբ երբ հոգիին բաժնուի, երբն ալ անօթի կը մնան:

Այսպէս ալ Պօլսոյ մէջ գտնուած հազիւ հինգ հարիւր հազար հոգուց բաւելու հարկը կեցած միջոցին երբ մէկ միլիոն երկու հարիւր հազար բնակիչ կը գտնուի, տարակոյս չի կայ որ ներդրութիւնները կը բազմանան, սղութիւնը կը ակտիւ և շահը կը պակսի:

Այս կէտիս վրայ տարակուսող չի կայ կարծեմք:

Ծագ. Գե. Բե. Կ. Գ.

դործադրութեան միշտ հսկելն առաջին դիւանոր պարտքը և պաշտօն է ոչ թէ եկեղեցականութեան միայն այլև ժողովրդեան . ուստի նորա սրբ Ազգ. Եկեղեցիէն բաժնուել կը խորհն կամ առանձնանալ Եկեղեցւոյ մը մէջ, չարաչար կը սխալին ու է քաղաքական կամ կրօնական կարծեաց մէջ : Զախտակողմեանց ջանքն այս է , այս է դաժ է , այս պիտի ըլլայ միշտ , ազգային և կրօնական զգացումները վառ պահել , ազգը տաւաղել ու ամփոփ պահել հոն , ուր հարք մեր և մարք տաւաղեցան , ամփոփեցան և հանգեան , և ոչ ոք կրօնաւ ցարգ , բայց որդին կրօնաւեան , զի գիրն , ճշմարտութիւնն լլցի , թող խմբակ մը իր կողորդը պատուէ , թէ « սուք քառուսից երկրպագու են » ապագան կը յայտնէ ճշմարտութիւնը , և յայտնեց ալ . յիշեմք Օրագրի երբեմն յայտնած 500 ոսկւոյ խնդիրը և իր բանքն առ դործակատար և բաժնարար Մատին : Բայց զայս չը մոռնանք յիշելու որ ըստ հարկին պահանջման կաթողիկոսի մը խաչով կամ այլով իւրք ու է իցէ զոր քաջաբերելը նոր չէ , միայն թէ այսպիսի տաքնապալից դէպքերու մէջ ի սկզբն շահու ախիպարութեամբ և յուսով ըսող բերանը կամ չը դործող զրիչը միշտ արհամարհանաց արժան նկատելու է , փոխանակ զի իր նուիրական պարտուց դործադրութեան մէջ դեղեւեցաւ և սպասեց :

Ինչպէս Հայ լրագրութեան և ժողովրդէն շատեր , նոյնպէս եկեղեցւոյ պաշտօնեութեանն շատեր փոյթ ու եռանդ ունեցան արդարև նահատակ և ախոյեան կանգնել տաղնային պոչն , արհամարհելով ամէն վրասան դ թէ բարոյական և թէ նիւթական : Երկու անձի օրինակ բաւական , մին , որ բերայի քարոզական պաշտօնէն լինելով վտանգեցաւ , իւր միւսն որ իր վիւսակիւլու ֆետիլ եկեղեցականութեամբն ամբողջ տարի մի վնասուեցաւ , բայց եկեղեցւոյ հաւատարիմ Ս. Պաշտօնէութիւնն ըստ իր ուստին և պարտուցն իր Աստուած վարդապետէն ուսած խոստովանութիւնը պատրաստ է միշտ անդադար յեղյեղել , « թէ ծառայը անպիտան եմք , զոր պարտն էր առնել , արարաք » :

... Տէր խմբագիր , գիրս առ ... խմբագրութիւնը յիշելու ուրիշ նպատակաւ չէ , այլ միայն յիշելու է Հայրենիք պատուական թերթիդ այն ծառայութիւնը , որ երբեմն ի պաշտպանութիւն մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ , ազգին մատոյց , որոյ փոխարէն Եկեղեցի միշտ օրհնող է և ես ազօթող :

1875 թ. հոկտ. 17 վ. ակն տ. Երբոյն ի . Հիւսար

Սըղերթի Առաջնորդական տեղապահ արժ. Յովհաննէս վարդապետ Բաղրանի իր ուղեորութեան մէջ պատահած դաւաճութիւնն վերոյ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ մեզ , որոնք ուշադրութեան արժանի ըլլալով արժան կը համարուի մեր ընթերցողաց հաղորդել : « Յորդախաղաց ձեան պատճառաւ քանի մը օր կարին մնալէ վերջը ճամբայ ելանք մեզի ընկեր ունենալով Տ. Գարբիէլ քահանան և 8-9 օրէն հասանք յԱրտօնք և յԱրտօնայ Մուշ երթալով , ուղղակի Ազգային առաջնորդարան իջանք . բայց դժբաղդաբար արժ. Խորէն վարդապետ իր պաշտօնատեղին չը գտնելով , բաւական ցաւ եղաւ մեր սրբտին . դառն գանգատներ կան իրեն դէմ : Մեր երջանիկ Եղիշէ Ամատունեաց վարդապետին ըսածին պէս « Գարբիէլ անկաւ , Մուշ վերաւորեցաւ » . արդարև Մուշ բարոյական վէրքերով վերաւորեալէ . Սամարայի դորաւոր բժիշկի մը կը կարօտի , որ նորա վէրքերը պատէ : Մուշ 4 օր մնալէ զինի , 5-6 օրէն հասանք Ս. Կարապետ . Գեր . Մամբրէ սրբաղան և պատ. միաբանութիւն զմեզ ըստ արժանւոյն պատուեցին . ուրիշ օր ամբողջ Գլխայ վանք կեցանք և լաւ տեղեկացանք վանուց դուրսեան և միաբանից կենցաղաւարութեան : Ս. Կարապետէն մեկնելով , եկանք ուղղակի յԱրտօնք և յԱրտօնայ մի օրէն հասանք ի Բաղէշ . Երդիկեանց մեծ . Դարիպան աղա մեր վաղածանօթ բարեկամը զմեզ հիւրնկալեց . տեղոյն Առաջնորդի և իշխանաց մէջ խոսովութիւն մը կար . շատ ախաղաղանք իբր Հայաստանեայց եկեղեցւոյ դաւակ ի հատուութիւն բերել . բայց չը յաջողեցանք : Բաղէշ երկու օր մը մնալէ զինի ամոյս 18 ին հասանք մեր պաշտօնատեղին ի Սըղերթ :

Սըղերթի տաւաղեալ վիճակը բաղձատեսակ աղէտիւր կարօտ լինելով մի քաղ և անձնազոհ հովուի , երբ մեր դալը լսեց , խմբովին որպէս երամա ձագուց հաւու ընդ առաջ մեր ելաւ . այս սրտաշարժ տեսարանին վրայ մեր սիրտը վշտացաւ , տեսնելով մի կառավարութեան օրէնք հոս մեծ մասամբ չը դործադրուի , հետեւարար և աղքատը կը նեղուի ու կը տաւաղի և օգնութիւն կաղաղակէ : Բիւրատերն են որ այս վնասները կը հասցնեն հակառակ վեհ : Սուղեանին արդարապէս կամայք . պէտք է որ Ազգին և կառավարութեան գուրթն ու կարելցութիւնը հրաւիրէք այս ողորմելի դաւաճին վրայ որ բարեխնամ կառավարութեան է և Ազգ . Պատրիարքարանէն դատուելի նեցուկ մը չունի » :

Սըղերթի արժ. առաջնորդական տեղապահին և Սըղերթի ազգայնոց կաւեռածոր որ բարեխնամ կառավարութիւնը դաւաճական հարստահարութեանց առաջն առնելու համար աղքատ միջոցներ ձեռք առած է , որոնցմով միայն պիտի կարենայ աղքատն ու անզօրը զօրաւորին և մեծին բռնութիւններէն ազաւել և իր իրաւանց տէրն ըլլալ :

Հետեւարար տարակոյս չկայ թէ դաւաճաց խորերը այս կամ այն անձին ձեռք դործուած զեղծութիւնը սուղ միջոցի մէջ պիտի վերջանան և ամեն հպատակը օրհնող ու ազօթող պիտի ըլլան օգնստափառ Սուղեանին կենացը :

— Իզմիրէն դեկտ. 22 թուով : « Միջին ցայտօր ոչ տետրակները յանձնուեցան արժ . նախագահին և ոչ ալ երեսփոխանական ժողովոյ դիւան կազմելու հրաման տրուեցաւ . թէ և անցեալ շաբթուան Ս. Պատրիարք Հօր նամակին վրայ կուսակալը խոստացաւ ամէն կերպով արդարութիւնը դործադրել . բայց

— Իզմիրէն դեկտ. 22 թուով : « Միջին ցայտօր ոչ տետրակները յանձնուեցան արժ . նախագահին և ոչ ալ երեսփոխանական ժողովոյ դիւան կազմելու հրաման տրուեցաւ . թէ և անցեալ շաբթուան Ս. Պատրիարք Հօր նամակին վրայ կուսակալը խոստացաւ ամէն կերպով արդարութիւնը դործադրել . բայց

դժբաղդաբար չը կատարուեցաւ . կասկած կայ որ տէֆթէրտար էֆէնտին Սպարթալեանի մտերիմ ըլլալով , նա ինքն չը թողուր կատարել Ազգին կամքը :

« Տեւնէնք , այս վիճակը ո՛ւր պիտի յանգի և ինչ արդիւնք պիտի ունենայ . Ս. Պատրիարքը ինչ միջոց ձեռք պիտի առնէ : Երէկ գիշեր կուսակալը Սպարթալեանէն հրաւիրուած ըլլալով , հոն գնաց :

« 8-10 օրէ ի վեր իտարէի ժողովը տետրակները յանձնելու իրաւը հանեց . բայց արդիւնք չը տեսնուեցաւ . ասոր վրայ կրկին թագրիւրներ դրուեցան » :

— Գարձեալ Իզմիրէն դեկտ. 27 թուով : « Ազգային տօմարները տակաւին յանձնուած չեն արժ . նախագահին ու նորոգ երեսփոխանութիւնն ալ իր դիւանը չէ կազմած . որուն համար չորեքշաբթի իրիկուն դարձեալ հեռագիր քաղաքացաւ ի Պատրիարքարան , որով կառավարկուի Եզարդոսական հեռագիր մը ուղղել տեղույս կուսակալին , որպէս զի տօմարները յանձնուին և ժողովը իւր դիւանը կազմէ :

« Ի սկզբան կուսակալը շատ յարգանքով վարուեցաւ , ժողովրդեան խնդիրը արդար և օրինաւոր գտաւ և խոստացաւ անպակշ յանձնել տօմարները և անարգել դուրսի ժողովը . բայց տէֆթէրտար էֆէնտի Սպարթալեանի մտերիմ ըլլալով , դարձեալ յաջողեցաւ դործը երկարածել , այնպէս որ այսօր երեսի վրայ մնացած է :

« Կուսակալը վերջապէս պայրամէն նտրի թողուց . այս անդամին չը պիտի դործուին արդեօք » :

— Ինչիկ Սեբաստացի Խըրմըզեան Մեծ . Միւրիթար էֆէնտի Սեբաստիոյ Սենեքերիմեան դպրոցին և Օտապաշեան Մեծ . Գրիգոր էֆէնտի Սեբաստիոյ Ներսիսեան դպրոցին լրագրէս մէյմէկ օրինակ նուիրեցին ազգասիրաբար :

— Անդրիանուպոլէն դեկտ. 22 թուով : « Հոս ցուրտը սկսած են , մէկ գէղ ձիւն եկած է . ցուրտին աստիճանը դրօշէն 11 աստիճան վար լիջաւ :

« Ինչիկ էֆէնտիին բերած կայսերական ֆէրմանը Տէրութեան դուռը կարգապահեցաւ ի ներկայութեան կուսակալին և այլոց երեսելեաց և կրօնազլոսոց . ամեն աղք վեհ . Սուլթանին ըրած շնորհաց համար շնորհակալութեան գրեր ուղղեցին առ կուսակալն , ինչդերևով որ բարեհաճի զայնս Բ. Գուռը մատուցանել :

« Գարբիէլ Ռչատուի և ընկերքը ամոյս 8 ին քաղաքս հասան և սկըսան ներկայացումներ տալ : »

... Խմբագիր

Չանձրացան և դուցէ զըրեցան մինչև հիմա ընթերցողք՝ այլ չհանձնուեցաւ Արսլանեան դպրոցի վրայ ստուրթիւններ ու զրպարտութիւններ գրելէ : Սա Հայրենիքի 27 հարթ թուով մէկ նամակ կը հրատարակէ , որով դպրոցի քննութեան վերայ քանի մը բանաստեղծութիւններ կը յօրինէ . նա ժամը 5 ին սկսաւ կրսէ՛

մինչդեռ 3 ին սկսած էր . 110 աչակերտը քննուեցան կրսէ՛ մինչդեռ 28 աչակերտներ էին անոնք . 6 տարուան արդիւնք էր այն կրսէ՛ երբ 3 տարի առաջ մեզ յանձնուած 31 աչակերտներէն , այն ալ հազիւ Սաղմոս կարգապող , Յ հատ միայն մնացած էր հոն . ասոնք դպրոցի արձանագրութիւնները կը ցցունեն և զոր գիտէ ամեն Բենիկացի . որի հօգ , եթէ նա կուզէ եղեր հաւատալ եթէ անպառօրէն չքննուեցան աչակերտք , և մեք կը շարժիմք եղեր մեր տեղէն . որի հօգ , եթէ նա կուզէ եղեր խածատել 2-3 քննիչ , որը թաղականի Մեհտար և որ մէկն ալ թաղականի միապետ անուանելով , բայց միթէ քննողները կամ վկայողները միայն թաղական էին և 2 անձ միայն եթէ ստոյգ է որ տանի չափ քննիչք ստորագրեցին և վկայեցին . եթէ ստոյգ է որ մեք հետեւեալ ուրը հրաժարեցան մեր պաշտօնէ և իրեն հօրէն ու հօրեղբօրէն սկսեալ առաջնորդ , քահանայ և ամենայն ոք ստիպեցին մեր պաշտօնը շարունակել . եթէ ստոյգ է որ Յակոբ Ե պիտիպոս ալ Եկեղեցւոյ ատենէն արդիւնքը մէծ է , լսաւ . և դարձեալ եթէ ստոյգ է որ ասոնք առաջի բաղմութեան և ժողովրդոց կատարեցաւ , և ինքն ալ մինչդեռ Հայրենիքի թիւ 263 քննութեան դալն անընդունելի է ըսելով եկաւ նստաւ , պայանձեցաւ և վերջն ալ երբ կը պոռայ հրապարակի վրայ որ սուտ կը խօսին եղեր այնչափ պատուաւոր մարդիկ և ինք միայն ճշմարիտ կը խօսի եղեր , և ձեռքը կուրծքին վրայ չի դնել եղեր , հարկ եղաւ ըսել որ Ասլանեան կամ անամօթութեան վերջին ծայրն հասած է , և կամ կրից ամբոխումէն գլուխն այնպէս դարձած է որ Տմ. Քեշիշ նման ոչխարաց երամակները աւազակաց խուճեր կերելակայէ :

1875 դեկտ. 12 թիւ կեան

Առաջնորդութիւն Ս. Մեհտարեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական երկրորդ բանակին նախորդ նախագահ ԱՏԿՄԵՒ փաշա Իսկիւտարի կառավարիչ , Իսկիւտարի կառավարիչ Յաղըլ վաչա երկրորդ բանակին նախագահ անուանեցան :

— Ծովային գործոց նախարար Բիզա փաշայի օրդի Սլի պէյլի գայմադամութեան աստիճան տրուեցաւ :

— Եգիպտոսի արտաքին գործոց պաշտօնեայ Նուպար փաշա հրաժարելով , Եէրիֆ փաշա յաջորդեց , նոյնպէս Բաղիպ փաշա առևտրական գործոց պաշտօնեայ անուանեցաւ :

— Կայսերական կառավարութիւնը 200 գրիւբի թնդանօթ ապսպրեր է :

— Տրպալիզոնէն կը գրեն թէ Կարնոյ նորընտր կուսակալ Մէհմետ Բէչիւ փաշա դեկտ. 13 ին Տրպալիզոն հասեր և հետեւեալ օրը Կարին մեկնել է :

— Պրուսայի դաւաճան անցեալ շաբթու 1,646,020 դրշ , նոյնպէս Տրապիզոնէն 550,000 դրշ . իրիւր է Մալիէն :

— Ազդեցիկ Մէրսին անուն շողե-
նաւը որ անցեալները Սև ծովու մէջ
Րիզի ծովափունքը խրեր էր, կրեք-
չաքթի օրնաւարան բերուեցաւ հարկ
եղած նորոգութիւնն ընելու համար:

— Երեքշաբթի օր Շիրազի հանրա-
կառայ կայարանին գիմաց հետե-
ւեալ ցաւալի դէպքը պատահեր է:
Յիշեալ տեղը չէնք մը շինուել սկը-
սած ըլլալու օր երեսունի չափ դոր-
ճաւորներ կը բանին եղեր, ասոնք
գործերինն ձգած մեկնելու միջո-
ցին յանկարծ չէնք կը վրչի և 18
հոգի կը մնան ներքեւ, որոցմէ չա-
տեր ծանրապէս կը վիրաւորին և քա-
նի մը հոգի ալ կը կորսուին:

Ոմանք յանցանքը ճարտարապետին
կուտան, ըսելով թէ հիմերը հաստա-
տուն չեն եղեր: Վիրաւորեալք ան-
միջապէս դադրական հիւանդանոցը
կը տարուին հոն խնամուելու համար:

— Երկուշաբթիէն երեքշաբթի
ընտանալու գիշեր Ռերայ Եպիսկոպոսի փո-
ղոցը անգղիացիի մը տուն գող մըտ-
ներով, շատ բան գողցեր և առեւ
քալեր են:

Լա թիւրքի կը պատմէ թէ հե-
տեւեալ օրը ոստիկանութիւնը դրա-
ցինքէն մէկուն վրայ կասկածելով,
գիշեր ատեն դայն բռնելու եկեր է:
Բայց մեծ բազմութիւն մը, այսինքն
100 ի չափ ոստիկան եկած ըլլալով,
ոստիկանաց և տանը մէջ եղողներուն
կողմանէ փոխադարձ ատրճանակ կը
սարկուեն, այնպէս որ փողոցի բու-
լոր բնակիչները անհուզով կը լեց-
ուին: Վերջապէս տակաւ առ տա-
կաւ կուրծք, ծեծկուռք կը վերջա-
նայ և ոստիկանները համոզուելով որ
գողը յաղորդած է փախչելու, կաննեն
կը քալեն:

— Քուլաի (Այսքնի կուսակալու-
թեան մէջ) նախկին փոխ-կառավա-
րի ձեւովեթ էֆէնտի Պէրկաի կա-
ռավարիչ:

Աթալաի նախկին փոխ-կառավա-
րի Ալի Մէվլաթ էֆէնտի թրէհի
(Այսքնի կուսակալութեան մէջ) կա-
ռավարիչ անուանեցան:

— Նազըէն Այսքնի լրագրին կը
գրեն թէ յիշեալ անգղերը բազում
տարիներէ ի վեր աւելորդաւաղակաց
խուժքը բռնուելով և բանալը դրուել-
ով, հասարակաց կեանքը վտանգէ
աղարկեր է:

— Կիրակի իրիկուն և երկուշաբթի
առաւօտ զրահաւոր նաւեր և ուրիշ
փոխադրական նաւեր արքունի նա-
ւարանէն դուրս ելնելով, Տոլմա-պաղ-
չէի կայսերական պալատին առջև
խարիսխ նետեցին:

Օսմանեան Պանքան վերջապէս ե-
րեկուան օրը ծանոց թէ պատրաստ
է յառաջիկայ յունվար 1ի կտրօններն
վճարելու:

Ուստի կը հրաւիրէ Գոնուլիստ ու-
նեցողներն որ յառաջիկայ շաբաթ օ-
րունէ սկսել իրենց վեցամեայ կըտ-
րօններն Պոլսի ձէղայրի խանը Ընդհ-
Պարտուց դրասինեակը տանին յանձ-
նելու, որոյ փոխարէն 2 ստացադիր
պիտի ընդունին, մէկուն մէջ կըտ-
րօններուն կէսին իրական դրամով
վճարման գումարը, միւսին մէջն
ալ անվճար մնացած մասն գումարը
պիտի նշանակուի:

Իրական դրամով վճարուելիք գու-
մարին ստացադիրներն, յանձնուեցին

տանն օր ետքը, Օսմանեան Պանքան
տարուելով, ստակը պիտի առնուի:
Իսկ միւս ստացադիրներն ալ վերջին
0/0 նոր արժէտովսերու հետ պիտի
փոխանակուին:

Սոյն յունվարի կտրօնները կ'ըն-
դունուին ձէղայրի խանը ամեն շաբ-
թու և երեքշաբթի, չորեքշաբթի և
շաբաթ օրերը, երկուշաբթի և հինգ-
շաբթի օրերն ալ յետեւեալ վեցամ-
սեայ կտրօններուն գործոցը յատկա-
ցեալ վնեկով: **Լրբէր**

Վերջին հաշիւներուն նայելով, աշ-
խարհիս վրայ բոլոր Ռողոքականաց
թիւն է իբր 96,000,000 որոնց իբր
25,000,000ը միացեալ նահանգաց մէջ
է:

Նիւ Եորքի նամակատունը կը գոր-
ծածէ 1,300 դրագիր և 390 ցրուիչ:
Ամերիկայի մէջ ցրուելու համար նա-
մակատունը բերուած նամակներուն
թիւը կը հասնի օրը 300,000ի և դուր-
սի երկիրներէն առնուածներուն թի-
ւը կը հասնի 30,000ի իսկ դուրս գը-
կուածներուն թիւը՝ 35,000ի:

Ամերիկայի մէջ կայ վեց միլիոն
Գերմանացի: Նիւ Եորքի մէջ բնակող
Գերմանացուց թիւն աւելի է քան
որեւիցէ քաղքի մէջ բնակողներունը,
բացի Պէրլինէ և Վիենայէ: Գերմա-
նացիք Ամերիկայի մէջ կը հրատարա-
կեն 340 Գերմաներէն լրագիր, գոր-
ծունէութեան և օրինապահութեան
մասին ալ գովելի են: Այս Գերմա-
նացիներէն շատեր Աւետարտական
Գրիստոնեայ են, բայց ցաւելով կ'ը-
սենք թէ Գերմանացուց մեծագոյն
մասը կրօնքի անփոյթ է:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ
ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՄԱԲԱՐՐԱՌՈՒՆ ԱՆԵՏԱՐԱՆԻ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
Ի Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ
Վ Ա Ր Յ Ա Պ Ե Տ Ե Ա Ն
ՊԱՏՐԻԱՐԻՔ ԸՆՅՈՅ Կ. ՊՈԼՍՈՅ

Սոյն ընտիր գործը՝ որ է չորից Ս.
Աւետարանչաց համաձայնութիւնն ու
անոնց բացատրութիւններն աշխար-
հիկ լեզուաւ գրուած՝ կը նուիրէ Հա-
յաստանեայց Ս. Եկեղեցույ զաւակաց
Ամեն . Տ . Տ . Ներսէս Սրբազան Ար-
քեպիսկոպոսն վարժապետեան, ար-
դի Պատրիարքն Կ. Պոլսոյ:

Գրաբառ մայրենի լեզուն պատ-
ճառ բռնելով՝ Ս. Աւետարանի կենա-
րար վարդապետութեանց լոյսը վա-
յելելու շնորհէն զուրկ մնալ կարծ-
ուած ազգայնոց համար առաջին
կարգի օգտակար այս գործը՝ որ թէ
Ս. Աւետարանի աշխարհաբառ թարգ-
մանութիւնն ու թէ անոր ողջամիտ
մեկնութիւնը միանգամայն իւր մէջը
կը պարունակէ՝ կրնայ շահաւոր ըլ-
լալ ամեն կարգի ազգայնոց, քահա-
նայից և ժողովրդոց, զոր եթէ ու-
սանելու աշխատութեանն չը խուսա-
փին՝ մտքամոտ արանդաւորաց բար-
բանմանց տեղի չեն տար իւրեանց
միտքերը պղտորելու:

Եկեղեցույ Հայրապետի մը վայե-
լու Հայն Հեղինակութիւնը՝ զՍրբա-
զան Պատրիարք Հայրն արդէն իւր
անուանակից Հայրապետաց կարգին
կարճանայունէ, որովհետեւ թէ բա-
նիւ և թէ գրով և թէ գործով Աս-
տուծոյ եկեղեցուոյն շինութեան գոր-
ծին աշխատած ըլլալու վկայութիւնն
առած և երանելի Հայրապետի
տիտղոսն իրաւամբ կը ժողանդէ:

Սոյն հեղինակութիւնը Արմաշու
վանուց տպարանէն ի լոյս կընծայի
ութեա՞ծ ալ միջակ գիրքով և կը բազ-
կանայ 769 երեսէ՝ մաքուր թղթի
վրայ տպագրեալ վաճառման կերբու-
նատեղին է ի Կ. Պոլսի Գալաթիեան
գրատունը, գին մէկ արծաթ մէ-
ճիտ. գործին առատութեան հետ
բաղդատելով գինը խիստ ավան
և դոյացած արդիւնքն ալ ըստ որոշման
Սրբազան հեղինակին պիտի գոր-
ծածուի յօգուտ նոյն վանուց գիշե-
րութեայ վարժարանին:

ԸՆԴԱՐՁԱԿ
ՕՐ Ա Յ Ո Յ Յ
Պատրիարքարար
1876 թ Ռ Ի Ի Ն

Յերեմիա Քանաճայե Խապիղի
Պարունակութիւն (բաց ի բուն Օ-
րացուցէ) պաշտօնական ցուցակ ան-
ուանց մկրտելի երախայից, ցուցակ
չբանուանց արական և իգական սե-
ւռի, ազգային վարչութիւն, ցուցակ
առաջնորդաց, վիճակագրութիւնք
տէրութեանց, նախարարք, հայ
պաշտօնատարք օսմանեան կայսրու-
թեան, ներկայացուցիչք օտար տէ-
րութեանց, գահակալք, գահաժա-
ռանդք, նախարարք, բնակիչք, գօ-
րութիւնք, նաւատորմք, գանձա-
լին վիճակք գլխաւոր տէրութեանց
արժէք գրամոց զանազան ազգաց:
Նաև Պատկերք կրօնական սրբա-
զան հարց և աշխարհական բարձրաս-
տիճան հայ պաշտօնէից ոմանց:
Կը ծախուի ամեն դրամաճառաց
քով ի գին 3 շըշ:

ԼՍԱՐԱՆ
Յոզնեայ Տէգթոն Գ. Բաքոմեան
Բողոքականաց հակասութիւնները
և սխալները վկայութիւններով և
փաստերով ցուցնող տետր մ'է,
որ մինչև չորրորդ թիւը հասած է:
Հայաստանեայց եկեղեցույ ուղ-
ղութեան փափաքող ազգայնոց
պարտքն է քաջալերել այս նորատի
հեղինակը:
Կը ծախուի կամուրջին գրութիւնը
պարագան գին 40 փարայ:

ԾԱՆՈՐ ԷՊԷՆՏԻ ՆԱԶԻԿԵԱՆ վկայ-
եալ փաստաբանը իւր դրաստեանի
փոխարքած է Պաղչէ դափու Շէյխ
խլամ խան վերնայարկ թիւ 5:
Նազըեան էֆէնտի Տաճկերէն և
Գաղղիերէն լեզուաց ալ քաջ հմուտ
թիւն ունենալով, տարակոյս չունիմք
թէ դատական խնդրոց համար առ

ինքն զխմաղ բոլոր անձինքը գոհ պի-
տի ընէ:

ՈՎ Է ՄԵՂԱԻՈՐԸ
ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ
Յ. Ա.
Ա. Տեթր:

Ընտանեկան կենաց, մանաւանդ
հայ տիկնանց վերջին տարիներս ու-
նեցած կեանքին վրայ կը խօսի:
Կը ծախուի բոլոր գրավաճառաց
քով:
Գին 100 փարայ:

Գաւառաց մէջ Հայերէնի և Տաճ-
կերէնի չափաւոր ամսականաւ դա-
սատուութիւն ընելու պատրաստ մէ-
կը կայ:
Ուղղը լրագրոյս անօրէնութեան
պէտք է գիմէ:

ՏԵՍԱԿԱՆ
ԵՆ ԴՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՅՐԱՆՍԵՐԷՆԻ

Երկրորդ տպագրութիւն քրննու-
ած և խիստ ճոխացած:
Լարուսի ընթացքին վրայ պարզ
և դիւրուողոց օճով գրուած դասա-
դիրք մ'է:
Կը ծախուի Սրապեան Պաղտասար
աղայի խանութը գինն է 1 Քր 80
սանթիմ:

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ
ՍՐՐՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Թէ՛ տաղաւար և թէ՛ լուր աւուրց
համար Ս. Պատարագի երգեցողու-
թիւնք, մեղեդիք, տաղք, և այլն,
բացի ճաշու շարականաց, ձայնազ-
րութեամբ տպագրուած և ի լոյս
ընծայուած են Ս. Էջմիածնի տպա-
րանէն:
Սորա մէջ առաւօտեան և երեկոյ-
եան ժամերգութեանց մէկ քանի կա-
րեւոր երգեր եւս իբրև յաւելուած
տպուած են:
Գինն է մէկ օսմ. ոսկի:
Կը ծախուին Ղալաթիոյ Հայոց ե-
կեղեցւոյն բանկայր և կամուրջի գըլ-
խուն պարագան:

ԼԻԻՊ ՊԷԻ ՃԷՏԻՏ
Գրեաց
ՄԻՔՐԷԼ ԿԵՆԷՏԻ

Տաճկերէնի պրոբէնը ուսանել
ուղղներու համար գիրուցոց քե-
րական մ'է:
Կը ծախուի Սրապեան Պաղտասար
աղայի խանութը գին 100 փրջ:

Ա Զ Դ
Լրագիրս ձեռքէ կը ծախուի կամուր-
ջին գրութե պարագան, սուճի Պ. Պողոսին
խանութը և կամուրջին վրայ լրագրալա-
ճաններու քով:

ՏՆՕ-ԽՄԲ	ՏԷՐ
Մ. Յ. ՄԵՂԻՔԵԱՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ	
ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՆ ԸՆԿ	
	Բիզպիալա խան քիւ 3